

ՀԱՄՕ ՕՀԱՆՋԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ԶՕՐ. ՔԷՅՍԻԻ ԵՒ ԴՐՈՅԻ
(Բ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱՆ)
ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

Համաշխարհային Բ. Պատերազմին, Ստալինկրատի ճակատամարտի ամենէն բուռն շրջանին, 1943ի Յունուարին, Աւետիք Իսահակեան հանդէս եկաւ «Արկածախնդիրները» անուն գրութեամբ ուր կ'ամբաստանէր Ալեքսանդր Խատիսեանը¹, Դրօ Կանայեանը² եւ Արտաշէս Արեղեանը³, որ «*Հիպոլէրի արիւնոյր կառքին լծուելով անոր աղէտալի բռնակալութիւնը կը փառաբանեն*»: Ան իր երկար գրութեան մէջ ի միջի այլոց կը գովէր ՀՅԴաշնակցութեան պայքարը սուլթաններու բռնապետութեան եւ քիւրտ պէկերուն դէմ եւ այդ անհաւասար պայքարին մէջ կուսակցութեան տուած անձնազոհ նահատակները եւ վերջաւորութեան հարց կու տար թէ «*արդեօք անհկա գիտէ՞ իր շրջանակէն ելած այս փարրերու գործունէութեան, կը դատապարտէ՞ եւ կը պայքարի՞ անոնց դէմ եւ կը մերկացնէ՞ զիրենք զանգուածներուն առջեւ եւ թէ կը բացատրէ՞ այս արկածախնդրութիւնը եւ անոր աղէտալի հետեւանքները, եթէ ոչ՝ կուսակցութեան օրուան վարիչները իրենք ալ պատասխանատու են 'հայ ժողովուրդին եւ պարմութեան առաջ'*»⁴:

Գահիրէ հրատարակուող ՀՅԴ Բիւրոյի օրկան *Յուսաբերի* 24 Ապրիլ 1943ի թիւին մէջ, Իսահակեանի գրութենէն շուրջ երեք ամիսներ ետք ու Ստալինկրատի մէջ նացիներու պարտութենէն (2 Փետրուար 1943) ետք, Համօ Օհանջանեան⁵ եօթը սիւնակնոց «Բաց Նամակ»ով պատասխանեց Իսահակեանին, գլխաւորաբար ըսելով՝ «*փարաքախտաբար քո գրութեան մէջ կայ միայն ամբաստանութիւն, փաստեր չկան, սակայն, չկայ ոչ իսկ մէկ փաստ՝ իբրեւ բացառութիւն*»: Ապա կը հերքէր թէ իր երեք ընկերները Հիթլերի «*աղէտալի բռնակալութիւնը կը փառաբանեն*», նշելով թէ 1939-1943 «*այս ընկերների բերանից [ոչ ոք] լսած չէ ոչ իսկ մէկ բառ*»: Լուռ է նաեւ ՀՅԴի Երոպայի մամուլը, որ չի հրատարակուիր, այս «*ընկերների սպորագրութիւնը՝ կրող որեւէ փաստաթուղթ չկայ, ոչ ալ որեւէ յայտարարութիւն*»⁶:

Անդին, Պերլինի մէջ կազմուած Հայ Ազգային Խորհուրդը (ՀԱԽ)⁷, որուն նախագահն էր Արեղեան, 15 Փետրուար 1943ին 12

յաջողություններու շրջանին, էլ Ալամէյնի ճակատամարտէն առաջ, Հալէպ ժամանած էր յատուկ առաքելութեամբ՝ շրջանակին տեղեկացնելու Բիւրոյի ի հարկին Կիպրոս հաւանական փոխադրութեան հարցով եւ զգուշացումներ տալու, ականջալուր կ'ըլլայ թէ Հալէպի մէջ պատասխանատուներ տեղեակ էին Դրոյի գործակցութենէն եւ թէ շարքերը ընդհանրապէս գերմանասէր էին¹²:

Ըստ Ծառուկեանի, հակառակ շարքերու եւ Հալէպի ղեկավար մարմնին մօտ տիրող կարծիքին՝ թէ Գերմանիան պիտի ըլլար պատերազմին յաղթականը, Օհանջանեան կ'ըսէ թէ դաշնակիցները պիտի յաղթէին եւ կ'եզրափակէ ըսելով. «մի՛ տարուիք խուսափուկ երեւոյթներից: ...Երեւակայել կարելի չէ որ Հիթլեր տիրապետէ աշխարհին: Մի հաւատաք ժամանակաւոր յաջողություններին: Յեղապաշտութեան մոլուցքից արքած Գերմանիան չի՛ կարող կասեցնել պատմութեան ընթացքը»¹³:

Ստալինկրատի մէջ Գերմանիոյ պարտութիւնը շրջադարձ մըն էր պատերազմի ամբողջական ելքին առնչութեամբ: Սակայն, ըստ երեւոյթին, Պերլինի մէջ ՀԱԽը պատերազմական քարոզչական մթնոլորտին մէջ չէր կրցած ըմբռնել այդ եւ 15 Փետրուար 1943ի վերոնշեալ յայտարարութիւնը:

Նացի Գերմանիան իր կրած պարտութենէն ետք հնարաւոր ամէն նեցուկ կը փնտռէր իրեն օգնելու ատակ հաւաքականութիւններէ: Դրօ եւս իր հետախուզական խումբով կը շարունակէր իր օժանդակութիւնը: Սիմոն Վրացեանի դատումով՝ «որեւէ գործակցութիւն հիմնում է կողմերի փոխադարձ շահի ճանաչման վրայ: Հայերի շահերը պարզ էին - ժողովուրդի ֆիզիքական ապահովութիւն եւ ապագայի քաղաքական երաշխիք: Գերմանիան էլ անշուշտ ունէր իր հաշիւներն ու շահերը»¹⁴:

Դաշնակից երկիրներուն եւ անոնց ազդեցութեան տակ գտնուող երկիրներուն կամ գաղութներուն մէջ այլեւս սկսած էր յստականալ պատերազմի շատ հաւանական ելքը՝ արեւմտեան դաշնակիցներուն եւ Խորհրդային Միութեան յաղթանակը, ճիշդ ինչպէս նախատեսած էր Օհանջանեան աւելի անորոշ օրերուն: Ուստի անբացատրելի չեն այս վերջինին հետեւեալ քայլերը:

Մեծն Բրիտանիոյ մէջ ՀՅԴ ներկայացուցիչ Ժիրայր Միսաքեանի¹⁵ դիմումը այդ երկրի Արտաքին Նախարարութեան՝ 7 Յունիս 1943ին եւ ապա Օհանջանեանի կողմէ Գահիրէ բնակող Միջին Արեւելեան Հարցերու Բրիտանական պետական նախարար

Ռիչըրտ Ճ. Քէյսի¹⁶ ուղղում 15 Յուլիս 1943 թուակիր նամակը եւ նոյն թուականով Դրոյի ուղղում նամակ մը, որոնց իրաքանչիւրին հերթով եւ անոնց տրուած բրիտանական պետական մեկնաբանութիւններուն պիտի անդրադառնանք, վերջաւորութեան կարգ մը ճշդումներ ընելով:

Միսաքեան 7 Յունիս 1943ին Անգլիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան (Ֆորէյն Օֆիս) նամակով մը կը դիմէր, խնդրելով օրինակ մը ՀՅԴ Բիւրոյի 6 Յուլիս 1941 թուակիր հաղորդագրութեան որ ղրկուած էր Գահիրէի բրիտանական ներկայացուցիչին: Միսաքեան կը յիշեցնէր թէ վերոյիշեալ հաղորդագրութեան մէջ «կուսակցութիւնը իր դիրքը ճշդած էր ներկայ պատերազմին մէջ»¹⁷:

16 Յունիսին Ֆորէյն Օֆիսը Բրիտանիոյ Արտաքին Գործոց նախարար Անթոնի Իտընի հրահանգով Միսաքեանի կը տեղեկացնէր թէ ՀՅԴ դիրքը ճշդող հաղորդագրութիւն մը ներկայ պատերազմի ընթացքին չէր ստացուած իրենց կողմէ: Միւս կողմէ Գահիրէի բրիտանական *Ինթելիճընս Սըրվիսը* կը նշէր թէ այդ հաղորդագրութիւնը իսկապէս ղրկուած էր¹⁸:

6 Յուլիս 1941ին դիրք ճշդող հաղորդագրութենէն օրինակ մը խնդրուիլը՝ անոր հրապարակումէն երկու տարի եւ Իսահակեանի գրութենէն ու Ստալինկրատի ճակատամարտին Գերմանիոյ պարտութենէն շուրջ հինգ ամիս ետք, ըստ երեւոյթին կը նպատակադրէր Ֆորէյն Օֆիսի միտքը նախապատրաստել ՀՅԴ Բիւրոյի ղեկավար Օհանջանեանի 15 Յուլիս 1943 թուակիր նամակին ընկալումին, որուն մէջ վերոյիշեալ հաղորդագրութեան հիմնական ակնարկութիւն մը կար: Ստորեւ կու տանք Օհանջանեանի՝ Քէյսիի ուղղած 15 Յուլիս 1943 թուակիր նամակը լրիւ, իր կարեւորութեան համար: Նամակը գրուած է անգլերէն, կու տանք հայերէն թարգմանութեամբ¹⁹:

Ձերդ Վսեմութիւն,

9 Ապրիլ 1943ին պատերազմը իրողապէս սկսաւ Եւրոպայի արեւմտեան ճակտին:

20 Ապրիլ 1940ին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ղրկեց իր առաջին շրջաբերական-հրահանգը կուսակցութեան այլազան մարմիններուն, մասնաւորելով դաշնակցութեան աներկդիմի յարումը ժողովրդավարութեան դատին:

Այս շրջաբերականը ղրկուեցաւ Հիւսիսային Ամերիկա եւ Պալ-քաններ՝ Լոնտոնի բրիտանական իշխանութեանց միջոցաւ:

Այդ ժամանակ կար ոչ-նախայարձակման դաշինք մը Գերմանիոյ եւ Ռուսիոյ միջեւ: Ինչպէս անկասկած գիտէք, մեր մայր հայրենիքը, Խորհրդային Հայաստանը մէկն է ԽՍՀՄի հանրապետութիւններէն, եւ աւելի քան երկու երրորդը մեր ամբողջ բնակչութեան, մօտաւորապէս երկուքուկէս միլիոն հոգի, կ'ապրին Խորհրդային Հայաստանի եւ ԽՍՀՄի մնացեալ մասերուն մէջ:

22 Յունիս 1941ին Գերմանիան յարձակեցաւ Խորհրդային Ռուսիոյ վրայ եւ այս վերջինը այդ ժամանակէն սկսեալ նկատուեցաւ իբր դաշնակից մը դեմոկրատական պլոքին:

Ռուսիոյ դեմոկրատութեան կողքին կենալը յստակօրէն եւ վերջնականօրէն հաստատեց մեր մայր հայրենիքի դիրքը այս պատերազմին մէջ:

Պոլշեփզմի հետ մեր ունեցած տարկարածութիւնները երկրորդական նկատելով, պատերազմական ճիգին բաղդատմամբ, 6 Յուլիս 1941ին, մենք գրաւոր դիմումնագիր մը ղրկեցինք Լոնտոնէն մեզի ցոյց տրուած պաշտօնեային, Զօր. Ճ. Քլէյթընի, արտայայտելով ՀՅԴի պատրաստակամութիւնը՝ գործակցելու կարելի առաւելագոյն չափով դեմոկրատական երկիրներու եւ իրենց դաշնակիցներուն հետ:

Մեր դիմումնագիրը նախ ջերմօրէն ընդունուեցաւ բրիտանական իշխանութիւններուն կողմէ, բայց եւ այնպէս յետոյ մերժուեցաւ:

Լոնտոնէն՝ Զօր. Ճ. Քլէյթընի²⁰ միջոցով մենք տեղեկացանք թէ բրիտանական իշխանութիւնները այլեւս հետաքրքրուած չէին մեզի հետ կապ պահելու: Մեզի հրահանգուեցաւ նաեւ դադրեցնել թրքական, ռուսական կամ քրտական ճակատներուն ամէն գործունէութիւն, որ կրնար ուղղուած ըլլալ Թուրքիոյ կամ Խորհրդային Ռուսիոյ դէմ:

Այս յայտարարութիւնը չազդեց մեր ճշդած քաղաքական ուղեգիծին: Այլեւս չակնկալելով գործակցութիւն, մենք պատասխանեցինք թէ մեր գաղափարականը ժողովրդավարութիւններունն էր, մենք կապուած էինք մասնակցելու պատերազմական ճիգին՝ մեզի տրամադրելի սահմաններուն մէջ:

Մենք այսպէս գործեցինք, քանի ժողովրդավարութիւններու յաղթանակը մեզի համար յաղթանակն է մեր ազգային դատին,

հակառակ այն իրողությանն որ այս Երկրորդ Համաշխարհային Պատերազմին մէջ հայկական ազգային հարցը պաշտօնապէս չընդունուեցաւ դաշնակիցներուն կողմէ, ինչպէս եղած էր առաջին մեծ պատերազմին:

Առանց խոր գոհունակութեան չէ որ կ'արձանագրենք հոս այն իրողութիւնը թէ հակառակ չորս ցամաքամասերու տարբեր երկիրներու մէջ ապրող այլազան գաղութներուն լայն ցրումին, հայ ազգային շահերը եւ մեր կազմակերպութեան կարգապահական ոգին ամէնուրեք եւ նոյնիսկ ծայրաստիճան պրկումի տակ՝ անփոփոխ կերպով այս գաղութները ժողովրդավարութիւններու կողմը պահած է:

Մեր ստացած ցանցառ եւ անվստահելի տեղեկութիւններէն կը հետեւցնենք, թէ նոյն դիրքը որդեգրուած է Առանցքի տիրապետութեան տակ եղող երկիրներու մէջ:

Այս ճիշդ է Եւրոպայի երկիրներուն մէջ ուր կան շուրջ 150,000 հայեր (մեծմասամբ Ֆրանսայի, Ռումանիոյ, Պուլկարիոյ եւ Յունաստանի մէջ):

Այս երկիրներուն մէջ մենք ունինք մեր լրագիրերը, մեր ակումբները, մեր դասախօսական սրահները: Որքան որ կրնանք հասկնալ, ոչ իսկ մէկը անոնցմէ բաց ձգուած է:

Չորս տարուայ ընթացքին, ոչ մէկ հանրային դէպք կամ յայտարարութիւն եղած է որեւէ եւրոպական երկրի մէջ՝ ՀՅԴի կամ հայ բնակչութեան այլ հատուածի մը կողմէ՝ Առանցքին ի նպաստ:

Ֆաշիստ ռատիօկայաններէն միայն Պերլինի կայանը կը խօսի հայերէն, շաբաթը երեք անգամ (անգոյն եւ չոր լուրեր)²¹, մինչ բազմաթիւ են Առանցքին ռատիօկայանները որոնք ամէն օր կը խօսին վրացերէն, ուքրաներէն եւ Խորհրդային Ռուսիոյ այլ լեզուներով, տալով ոչ միայն լուրեր այլեւ քաղաքական ճառեր:

Մենք կը հակինք մտածելու թէ ասիկա մասամբ արդիւնքն է այս պատերազմին ՀՅԴի որդեգրած դիրքին, որ սկիզբէն ցոյց տուաւ որ ինք ժողովրդավարութիւններուն հետն էր, ինչպէս եղած էր Առաջին Համաշխարհային Պատերազմին:

Թշնամի ռատիօկայաններու ըրած յայտարարութիւններէն յստակ է թէ Առանցքը կը ջանայ արեւելեան ռազմաճակատի գերիներէն, ինչպէս նաեւ ԽՍՀՄ տիրապետութեան տակ ինկած երկիրներու անդամներէն ազգային զօրաբաժիններ կազմել: Ան կը կազմէ նաեւ անուանական կառավարութիւններ այս

ժողովուրդներուն համար եւ կը ջանայ զանոնք օգտագործել իր նպատակներուն համար:

Յարդ, յիշատակում եղած է ռուսերու, ուքրանացիներու, վրացիներու, ազերիներու եւ հինգ կամ վեց այլ ազգերու, որոնք ինքնավար շրջաններ ունին Հիւսիսային Կովկասի մէջ: Առանցքը յաջողած է իրենցմէ ազգային զօրաբաժիններ կազմել, իրենց կողքին տեղաւորելով այսպէս կոչուած ազգային կոմիտէներ:

Մինչեւ հիմա, բարեբախտաբար, մեր ազգին անունը դուրս ձգուած է²²:

Այլազան պատճառներէն - որոնք կրնան բացատրել ասիկա - կ'ուզենք ձեր մասնաւոր ուշադրութիւնը այսմէկուն հրաւիրել:

Ապրիլ 1942ին նախագահ²³ եւ Արտաքին գործերու Կոմիսար, Պր. Մոլոթովի՝ ԽՍՀՄ այլազան ազգերուն ղրկուած յուշագրի մը մէջ, ռազմաճակատին ռուսերու ձեռք բերած Կէօրինկի գաղտնի հրամանէն հետեւեալ պարբերութեան մէջբերումը [կ'ընենք].

«Կովկասի մէջ մեր շահերուն համար պէտք է օգտագործել բնիկներու (վրացիներ, հայեր, թաթարներ, ռուսեր) միջեւ եղած թըշնամութիւնները: *Պէտք է հաշուի առնենք մեր դէմ հայերու յայտուկ թշնամութիւնը* (ընդգծումը նամակագրին կողմէ - Ձ.Մ.)»²⁴:

Մենք կը հաւատանք թէ այս նաեւ բանալին է այն պատճառին որով նացիները հեռու պիտի մնան մեզի հետ որեւէ կապ ունենալէ:

Բայց եւ այնպէս, Առանցքը շատ-շատ զօրաւոր է, իսկ գրաւեալ երկիրներու մէջ հայերը շատ շատ տկար են:

Այն ինչ որ թշնամին յաջողած է ամէնուն պարտադրել՝ կրնայ փորձել նաեւ պարտադրել մեր ժողովուրդի այն հատուածին որ կ'ապրի իր իշխանութեան տակ:

Անհրաժեշտ է որ մենք ձեւով մը կարողանանք կապի մէջ մտնել Եւրոպայի մեր գաղութներուն հետ, քանի նոյնիսկ եթէ շատ բան չենք կրնար ընել, կրնանք առնուազն զօրացնել մեր ժողովուրդին դիմադրութիւնը նացի պարտադրուած ծրագիրներուն դէմ:

Ձեզմէ կը խնդրենք մեզի շնորհել որոշ միջոց մը՝ կապ հաստատելու այժմ Փարիզի կամ Պուքրէշ գտնուող ՀՅԴ անդամի մը հետ, որպէսզի կարելի դառնայ իրենց փոխանցել ներփակ նամակը²⁵:

Ինչպէս դուք իվիճակի էք նշմարելու, այս նամակին մէջ հետեւեալ կէտերը ամփոփ կերպով կրկնուած են.-

Մէկ՝ մեր քաղաքականութիւնը: Երկու՝ մեր հաւատքը ժողովրդավարութիւններու հաւատքին հանդէպ: Երեք՝ մեր հրահանգը մեր անդամներուն՝ հեռու մնալու որեւէ գործակցութիւն ունենալէ նացիներու հետ որեւէ պարագայի տակ: Չորս՝ կուսակցութեան որոշումը որ կ'ըսէ թէ կուսակցութեան բոլոր մարմինները ինքնաբերաբար լուծարուած են Առանցքի գրաւած երկիրներուն մէջ եւ արգիլած կազմութիւնը որեւէ նոր մարմնի՝ առանց մեզմէ նոր հրահանգ ստանալու: Հինգ՝ մեր որոշումը որ մեր կուսակցութեան բոլոր անդամները որոնք Առանցքի հետ որեւէ կապ ունենան անվերադարձօրէն հեռացուած են մեր շարքերէն:

Անհունօրէն երախտապարտ պիտի ըլլանք եթէ ականջ կրնաք տալ մեր ունեցած մէկ ուրիշ խնդրանքին:

Ինչպէս նշեցինք, այս պատերազմին առաջին իսկ օրէն, մեր ազգը իր բոլոր քաղաքական հոսանքներով, կազմակերպութիւններով եւ հիմնարկներով ժողովրդավարութիւններուն հետն է, հաւատալով որ անոր յաղթանակը իր սեփականն է:

Այս պատերազմը շարունակութիւնն է առաջին մեծ պատերազմին, որուն մէջ հայ ազգը մասնակցեցաւ իր բոլոր ուժով, իր ժողովուրդին մէկ միլիոնի կորուստը կրելով, այլազան ճակատներուն, զանգուածային ջարդերով կամ լայնատարած տեղահանութիւններով, կորուստ մը որ որեւէ մէկ ուրիշ ազգ չէ ունեցած, եթէ նկատի առնենք համեստ թիւը մեր ժողովուրդին:

Մեր զոհողութիւնները իրենց վարձատրութիւնը գտան Սեւրի Դաշնագրին մէջ, որ Անկախ Հայաստան մը ստեղծեց, որուն սահմանները գծուեցան նախագահ Ուիլսոնի կողմէ:

Դժբախտաբար դաշնագիրը շատ կարճատեւ կեանք ունեցաւ եւ մեր մայր հայրենիքը զոհ գնաց պայքարներուն որոնք ծագած էին քաղաքական աշխարհին մէջ: Յետոյ Սեւրի Դաշնագիրը Լոզանի Դաշնագրով թաղուեցաւ, մեր ազգը վերածելով իրենց բնական իրաւունքներէն ամէնէն շատ մերկացուած ազգերէն մէկը:

Մենք ջերմօրէն կը հաւատանք որ մեր ժողովուրդը նաեւ յառաջիկայ խաղաղութեան պիտի ունենայ Արդարութեան իր չափաւոր բաժինը:

Մենք կը հաւատանք որ բոլոր այն խնդիրները որոնք առանց լուծումի ձգուած էին նախորդ պատերազմի վերջաւորութեան, պիտի գտնեն իրենց տրամաբանական լուծումը այս անգամ, երկար ժամանակի մը համար նոր պատերազմի մը գլուխ ցցելը անկարելի դարձնելով:

Այս հաւատքով ձեզմէ ջերմօրէն կ'աղերսենք մեր օգնութեան գալ ձեր խորհուրդով եւ դիւրացնել մեր կապ պահելը մէկու մը հետ, որ մեզմէ պիտի ստանայ հարցումներ մեր ազգային դատին առնչութեամբ, եւ որ մեզի պիտի հայթայթէ անփոխարինելի քաղաքական ուղղութիւն²⁶:

Նամակագիրը՝ Օհանջանեան, ստորագրած է զայն իբր Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետ:

Լոնտոնի Ֆորէյն Օֆիսին մէջ այս նամակին կարգ մը պարբերութիւնները ընդգծուած են մասնագէտներու կողմէ. անոնք՝ որ կը վերաբերին նացիներու կազմած ազգային զօրամասերուն, Փարիզի եւ Պուքրէշի մէջ ՀՅԴ անդամի մը հետ կապ պահելու անհրաժեշտութեան խնդրանքին, պատերազմէն ետք հայոց արդարութեան հաւատքին եւ վերջին պարբերութեամբ պարզուած կապերը վերահաստատելու խնդրանքին: Այս կապերը բրիտանացիք խզած էին Սեպտեմբեր 1941ին, խորհրդայինները չնեղացնելու մտօք:

Նացի Գերմանիոյ Վեիքմախթը կազմած էր գերման հրամանատարութեամբ հայկական լեգէոն մը²⁷, նամակին մէջ նշուած միւս ազգութիւններուն նմանն, թէւ անոնցմէ քիչ մը ուշ:

Թէեւ Օհանջանեան Դրոյին ուղղած իր նամակը ներփակած էր բրիտանացիներուն ուղղած իր ընդարձակ նամակին, ակնարկութիւն չէր ըրած Դրոյի՝ նացիներու հետ ունեցած գործակցութեան եւ իր կազմած 65-120 անձերու միջեւ տարութերող հետախուզական խումբին: Նոյնպէս, նամակին մէջ չէր նշած թէ հայերէնով գրուած նամակը Դրոյի ուղղուած էր, այլ՝ նշուած էր իբրեւ «ներփակ նամակ»:

Օհանջանեանի բրիտանացիներուն ուղղած 16 Յուլիս 1943 չուակիր նամակը յատուկ մեկնաբանութեան ենթարկուած է 22 Յուլիսին, Ա.Ա. ստորագրութեամբ մասնագէտի մը կողմէ, իսկութեան մէջ՝ Գնդ. Սիմսըն, եւ դասակարգուած իբր «գաղտնի»: Այդ մեկնաբանութիւնը, որ յանձնուած էր Զօր. Քլէյթընի, իր կարեւորութեան համար լրիւ կու տանք ստորեւ.

[Նամակի] սկզբնական պարբերության վերաբերելով, թեև որեւէ անձնական տեղեկություն չունիմ 20 Ապրիլ 1940 թուակիր շրջաբերական հրահանգին մասին, նոյն ժամանակ պատճառ չունիմ կասկածելու գոյութեան՝ նման վաւերաթուղթի մը:

Գալով նշուած 6 Յուլիս 1941 թուակիր երկրորդ նամակին եւ յաջորդող խօսակցութեան, Տոքթ. Օհանջանեան շատ ճշգրիտ չէ մանրամասնութեան վերաբերեալ. ասիկա հաւանաբար կը բացատրուի այն իրողութեամբ որ խնդրոյ առարկայ նամակը գրուած է Դոկտ. Ռուբէն Տէր Մինասեանին²⁸ կողմէ, որուն հետ նաեւ յաջորդող խօսակցութիւնը տեղի ունեցաւ: Տոքթ. Օհանջանեան անձամբ ներկայ չէր:

Դէպքերու իրական յաջորդականութիւնը հետեւեալն էր.-

Անմիջապէս որ Գերմանիոյ՝ Ռուսիոյ վրայ յարձակման լուրը ստացուեցաւ, Գահիրէի դաշնակ կեդրոնական կոմիտէն (Բիւրօն - Զ.Մ.) բանաձեւ մը անցուց թէ՛ հակառակ իրենց նախորդ տարակարծութիւններուն կուսակցութիւնը որոշած է վերջնականապէս խորհրդայիններուն կողքին ինքզինք դասել Առանցքի պետութեանց դէմ իրենց պայքարին մէջ, եւ այդ՝ առանց թողլքելու իրենց գաղափարական համոզումները: Անոնք պատրաստ էին օգնելու անկլօ-ռուսական պլոքին ամէն սրտով, իրենց ուժին մէջ եղող ամէն տրամադրելի միջոցներով: Աւելին, անտեղի նկատելով հանդերձ մեր Թուրքիոյ վրայ յենիլը, անոնք ընդունեցին ետ կենալ որեւէ քայլէ որ կրնար Անքարայի կառավարութիւնը նեղութեան մատնել, այնքան ատեն որ [վերջինս] հաւատարիմ մնայ Միացեալ պետութիւններու հանդէպ ունեցած յանձնառութիւններուն:

Անմիջական այս որոշումը փոխանցուեցաւ Գահիրէի բրիտանական զինուորական իշխանութիւններուն, առաջին հերթին բրիտանացի եւ յաջորդաբար՝ Գնդ. Զօր. Քլէյթընին հասցէագրուած ապահովագրեալ 30 Յունիս 1941 թուակիր նամակով մը: Անոնք մեզի տեղեկացուցին թէ նոյնիմաստ վճռական հրահանգներ ղրկուած էին իրենց ենթակոմիտէներուն:

Պարսկաստանի, Իրաքի եւ Սուրիոյ, ինչպէս նաեւ Լոնտոնի (Պր. Հ. Փանիկեան) եւ ԱՄՆի [ենթակոմիտէներուն]: Մենք գիտենք թէ նման հրահանգներ իրապէս ղրկուած են 6 եւ 7 Յուլիս 1941ին եւ թէ անոնք ստացուած են:

Այս թղթակցութեան լրիւ հաշուետւութիւնը այլուր երեւցած է: Նոյն ժամանակ Կեդրոնական Կոմիտէն (Բիւրօն - Զ.Մ.), խնդրեց Ն[որին] Վ[եհափառութեան] կառավարութեան օգնութիւնը խորհրդայիններուն հետ կապ պահելու իրենց [ՀՅԴ] կուսակցութեան լիաբուն գործակցութիւնը առաջարկելու մտօք: Պատճառներով - որոնց մէջ մտնելու պէտք չունինք հոս - եւ նաեւ առաջքն առնելու համար Թուրքիոյ եւ ԽՍՀՄ կառավարութիւններուն թիրազգածութիւնները վիրաւորելու, ՆՎԿ[առավարութիւնը] իվերջոյ որոշեց որ ինք չի կրնար իբր միջնորդի ծառայել, քանի չէր ուզեր որ կասկածելի դառնար փոքրամասնական կուսակցութեան մը հետ ընդլատակեայ կապերով: ՆՎԿ[առավարութիւնը], այսուհանդերձ, Սեպտեմբերի կէսերուն խորհրդայիններուն տեղեկացուց որ այս ինքնաբոլի ու անմիջական օժանդակութեան առաջարկը եղած էր, եւ աւելցուց թէ դաշնակները կրնան բացուիլ գերմանական քարոզչութեան՝ եթէ առաջարկը անտեսուէր:

Նոյն ատեն Լոնտոնէն հրահանգներ ստացուեցան դաշնակ կուսակցութեան հետ բոլոր կապերը խզելու: Այս որոշումը իրենց ներկայացուցիչին հաղորդուեցաւ 1941 Սեպտեմբերի սկիզբին: Իրենց բացատրուեցաւ թէ թէեւ մենք կասկածներ չունինք դաշնակիցներու դատին հանդէպ իրենց հաւատարմութեան. մենք անկարող էինք իրենց որեւէ օժանդակութիւն տալ, ոչ ալ կրնայինք իրենց հետ որեւէ տեսակի յարաբերութիւններ ունենալ, քանի ատոր անխուսափելի հետեւանքը պիտի ըլլար կասկածի յառաջացումը մեր դաշնակիցներու միտքին մէջ: Միաժամանակ, իրենց բարեկամական ազդարարութիւն մը տուինք, իրենց բարիքին համար՝ կանխել՝ որեւէ գործունէութիւն, որ կրնար հասկնալիօրէն թիրազգածութիւններ յառաջացնել կամ թուրքերու կամ ռուսերու կասկածները արթնցնել, քանի նման պարագայի մը մենք պիտի ստիպուէինք անմիջական քայլու դիմել իրենց կուսակցութեան դէմ:

Այդ ժամանակէն իվեր դաշնակ կուսակցութեան գործունէութեան շատ մօտէն հետեւած ենք եւ պատճառ չունինք փոխելու կարծիքս զոր նախորդ առիթներով ալ արտայայտած եմ: Ինչպէս տեղեակ էք, սպառիչ սերտողութիւն մը կատարած եմ Հայկական Հարցին մասին իմ պարտականութիւններուս բերումով՝ անցնող երկու տարիներուն եւ կը կարծեմ թէ արդար

է կրկնել հոս որ դաշնակ
կուսակցութեան
քաղաքականութիւնը
հետեւողականօրէն
հաւատարիմ եղած է
դաշնակիցներուն,
նկատելի չառնելով մեր
կողմէ քաջալերութեան
ամբողջական պակասը եւ
իրենց ղեկավարին
առեւանգումը Թեհրանի
մէջ 26 Դեկտեմբեր

1941ին²⁹: Մենք գիտենք նաեւ որ իրենց նկատառելի ազդեցութիւնը Հոյսունի վրայ, անընդմէջ ուղղուած է քիւրտերը լուռ պահելու³⁰:

Միջին Արեւելքի եւ Ամերիկայի մէջ կուսակցութեան կարգապահութիւնը զօրաւոր է:

9 ամիս առաջ, կարծեմ Հոկտեմբեր 1942ին էր, չհաստատուած տեղեկագիր մը ստացուեցաւ գաղտնի աղբիւրէ մը որ Զօր. Կանայեան (ընդհանրապէս ծանօթ իբր Զօր. Դրօ) Ալեքսանդր Խատիսեանի (Նախկին հայ Նախարար մը) հետ միասին կը գործէին գերմաններուն հետ:

Իբր պատասխան Տոքթ. Օհանջանեան բաց նամակ մը յղեց Իսահակեանին՝ խնդրելով իրմէ որ փաստեր հայթայթէ իր ամբաստանութեան որպէս հաստատում:

Որքան որ գիտեմ՝ որեւէ նոր, յաւելեալ զարգացում չէ եղած, բայց կ'ենթադրեմ, ասիկա հիմնական պատճառն է իրենց փափաքին՝ որ իրենց դիւրութիւններ ընծայուին Առանցքի հողամասին մէջ եղող իրենց անդամներուն հրահանգներ ղրկելու:

Նամակին եզրափակիչ ակնարկութիւնները Սեւրի եւ Լոզանի դաշնագրին յստակ փաստարկ մըն են հայերու (նաեւ քիւրտերու) մտադրութիւններուն՝ իրենց ազգային հարցերը արծարծելու՝ յառաջիկայ խաղաղութեան խորհրդաժողովին:

Այսօրուան պայմանները շատ տարբեր են անոնցմէ, որոնք գոյ էին երբ Լոզանի Դաշնագիրը ստորագրուեցաւ 24 Յուլիս 1943ին եւ թէեւ աներկաբայելիօրէն կանխահաս է որեւէ յստակ ծրագիրներ ձեւաւորել, շատ մեծ նախապատրաստական աշխատանք կայ Միջին Արեւելքի փոքրամասնութիւններուն վերաբերեալ որ պէտք է տակաւին կատարուի՝ նախքան որեւէ անկլօ-ամերիկեան միացեալ քաղաքականութեան մը ճշդուիլը³²:

Քէյսիի տրուած նամակին Գահիրէի մէջ պատասխան չտուին: Լոնտոն ղրկուեցան նամակները, որոնց կցուած 28 Յուլիս 1923 թուակիր երկտողի մը մէջ բրիտանական «քաղաքական բաժին»ը կը գրէր որ քանի հրահանգ ստացուած է «չխաղալ դաշնակ կոմիտէի հետ», պետական նախարարի Գահիրէի գրասենեակը որեւէ քայլ չէր առած բացի նամակներու Լոնտոն ուղարկումէն³³:

Օհանջանեանի՝ Դրոյի ուղղած ձեռագիր նամակը, բրիտանական իշխանութիւններէն կը խնդրէր Փարիզի կամ Պուքրէշի մէջ ՀՅԴի անդամի մը հասցնել՝ ստորելու լրիւ կու տանք, նամակագիրին ընդգծումներով³⁴:

15 Յուլիս 1943, Գահիրէ

Սիրելի Դրօ,

Պատերազմը մեզ իրարից բոլորովին բաժանեց: Որեւէ լուր ուղղակի ձեզնից չունինք. չունինք նաեւ անուղղակի աղբիւրներից որեւէ ստոյգ տեղեկութիւն ձեր մասին:

Սակայն, երբեմնապէս, այս կամ այն ճանապարհով, կցկտոր ու հակասական լուրեր են հասնում ձեր մասին: Ասում է, օրինակ, որ ինչ-որ ապօրինի մարմին էք կազմել եւ գործակցութեան մտել նացիների հետ, որ Ղրիմի մէջ, քո գլխաւորութեամբ հայկական մեծ բանակ էք կազմել՝ բոլշեւիկների դէմ կռուելու համար, նացիզմի ստիպումի տակ փորձեր էք արել մինչեւ իսկ այլ տեղերի հայերին այս կամ այն չափով մասնակից անելու ձեր գործին:

Չենք հաւատում այս լուրերին, բայց նրանք առիթից առիթ շարունակում են կրկնուել:

Գիտես մեր ուղղութիւնը, որի մասին ժամանակին յայտնել ենք քեզ թէ՛ շրջաբերականով եւ թէ՛՝ զատ նամակներով:

Դատով, ժողովրդով, երկրով, գաղութներով ու նաեւ դաւանանքով դաշնակիցների հետ ենք՝ նրանց յաղթանակի մէջ մեր յաղթանակը տեսնելով:

Այսքան յստակ, որոշ եւ վերջնական լինելով մեր դիրքը՝ իր ժամանակին առած ենք հետեւեալ որոշումները:

Առաջին.- Այն բոլոր վայրերում ուր կը հաստատուեն նացի իշխանութիւնները, լուծուած նկատել մեր մարմինները: Լուծումից յետոյ նոր մարմին կարելի է կազմել միայն մե՛ր գիտութեամբ ու մե՛ր հրահանգով:

Երկրորդ.- Եթէ մարմնի լուծումից յետոյ որեւէ դաշնակցական՝ թշնամու ենթակայ երկրում կը յանդգնի խօսել եւ գործել դաշնակցութեան անունից, այդպիսին նկատել ընդմիջտ վտարուած մեր շարքերից եւ ենթակայ կարգապահական պատժի:

Եթէ այս որոշումները հասած չեն ձեզ՝ այսու հրահանգում ենք նկատի առնել եւ խստիւ գործադրել:

Մեր ընկերներից որեւէ մէկը եթէ մոլորանքի մատնուած է եւ գործակցութեան մտած է նացիների հետ՝ հրահանգեցէք մեկուսանալու. եթէ չենթարկուի՝ վտարման մեր որոշումը հաղորդեցէք իրեն:

Այս նոյն որոշումին ենթակայ են բոլորը, ինչպէս նաեւ դու եւ քեզ հետ եղողները. եթէ օրինակ, մեզ հասած լուրերը ճիշդ են քո մասին, որոնց մենք, սակայն, չենք հաւատում, ապա նկատի առ, որ դու այլեւս ընկեր չես մեզ, իրաւունք չունես իբրեւ

դաշնակցական խօսելու, ու մենք քեզ ու քեզ հետ եղողներին պիտի յայտարարենք վտարուած շարքերից:

Մի երկու բառով ձեզ ծանօթացնենք կացութեան:

Կասկած չունինք որ դուք աշխարհից կտրուած լինելով, կացութեան մասին ստոյգ պատկերացում չունէք:

Գիտցած եղէք ու համոզուեցէք, որ ֆաշական ուժերի պարտութիւնը – լրիւ եւ ամբողջական – անխուսափելի է եւ վերջնական:

Ուստի ձեզ կը մնայ մի կերպ ձեր գլուխը փրկել, մինչեւ որ յաղթանակի եւ ազատութեան ժամը կը հնչի:

Պիտի խնդրենք այս նոյն ճանապարհով անպայման պատասխանել մեզ:

Մենք բոլորս առողջ ենք:

Համբոյրներով՝ Համ. Օհանջանեան

Օհանջանեանի՝ Դրոյի ուղղած հայերէն նամակը բրիտանացիք բնականօրէն Գահիրէի մէջ իսկ թարգմանած ըլլալու են, քանի թէ՛ Գահիրէի, թէ՛ Լոնտոնի Ֆորէյն Օֆիսի մեկնաբանութիւններուն եւ արձանագրութիւններուն մէջ նամակի պարունակութեան ակնարկութիւն կայ³⁵:

Լոնտոնի Ֆորէյն Օֆիսի 9 Օգոստոս 1943ի ատենագրութիւնները այդ առթիւ ուշագրաւ են: Հոն գրուած է հետեւեալը.-

Բոլորովին անջատ դաշնակներէն, որոնց մենք դրժած ենք, որեւէ հաղորդակցութեան փոխանցման կասկածելի իմաստութենէն, նուազագոյն գաղափարն իսկ չունիմ թէ ինչպէ՛ս կ'առաջարկուի ներկայ նամակը փոխանցել այս կասկածելի զօրավարին (նկատի ունի Դրօն – Զ.Մ.), որուն ուր գտնուելուն մասին մեզի ոչինչ ըսուած է, բացի անուղղակի թելադրանքէ մը թէ կրնայ Խրիմ ըլլալ: Զօրավարէն կը պահանջուի պատասխանել «նոյն խողովակի միջոցաւ», կարծես թէ մենք շաբաթական նամակապարկի ծառայութիւն ունինք դէպի Սեաստափոլ:

Կարծեմ՝ մենք պէտք է պատասխանենք թէ բան մըն ալ պիտի չընենք Զօր. Դրոյի այս նամակով, կը խորհիմ թէ որքան որ մեզի կ'առնչուի, աւելի լաւ պիտի ըլլար չպատասխանել Պր. Քէյսիի ուղղուած Տոքթ. Օհանջանեանի նամակին³⁶:

Դանդաղորեն գործելով, 22 Սեպտեմբեր 1943ին Լոնտոնի Ֆորեյն Օֆիսի արեւելեան բաժանմունքը հետեւեալը կը գրէր Գահիրէի բրիտանական պետական նախարարի գրասենեակի յատուկ բաժանմունքին.-

Դիւրին չէ նկատել թէ ինչպէս Տոքթ. Օհանջանեան [մեզմէ] կ'անկալէ իր նամակը փոխանցել Զօր. Դրոյի, որուն ուր ըլլալը հազիւ անուղղակիօրէն թելադրուած է: Նկատի առնելէ ետք, մենք որոշած ենք ոչինչ ընել այս նամակին հետ, եւ մեր կարծիքով անբաղձալի պիտի ըլլար ձեզի համար պատասխանել Տոքթ. Օհանջանեանի՝ Պր. Քէյսիի ուղղած նամակին: Իդէպ, Գնդ. Սիմսընի մեկնաբանութիւններուն էջ 1ի պարբերութիւնը, ուր կ'ըսէ թէ Ն.Վ. Կառավարութիւնը խորհրդային կառավարութեան Սեպտեմբեր 1941ին տեղեկացուց թէ դաշնակները կրնան ենթակայ ըլլալ գերման քարոզչութեան, եթէ իրենց օժանդակութեան առաջարկը անգիտացուի, լրիւ ճշգրիտ չէ: Խորհրդային կառավարութեան պարզապէս տեղեկացուեցաւ առաջարկը եւ [միաժամանակ] մեր որոշումը՝ դաշնակներուն հետ բոլոր կապերը խզելու³⁷:

ՎԵՐՋԱԲԱՆ

Նամակը մնաց Լոնտոնի Ֆորեյն Օֆիսի թղթածրարներուն մէջ եւ ուստի, Դրոյին չհասաւ:

Ու՛ր կը գտնուէր Դրօն նամակը գրուած շրջանին: Ան հաւանաբար Սիմֆերոպոլ, Խրիմ էր: Նախկին ռազմագերի մը գրած է. *«1942ի Հոկտեմբերին մեզ փոխադրեցին Խերսոն, այնտեղից էլ Մարիոպոլ, Նիկոլայեւ, իսկ [1943ի] գարնան Վինեցիայի մարզ, այնտեղից Լեհաստան: Ապա անցանք Ռումանիա, Հունգարիա, Հարաւսլաւիա, Գերմանիա եւ իվերջոյ Աւստրիա: Այս ամբողջ ճանապարհորդութեան ընթացքում մեր բարերարը [Դրօն] մեր թիկունքին էր»*³⁸:

Այլազան վկայութիւններ կը նշեն թէ Դրօ Ստալինկրատի գերման անձնատուութեան օրը՝ 2 Փետրուար 1943ին Հայտելպերկ³⁹, Ապրիլ 1943ին՝ Արեւելեան Ճակատ, 1943ի ամառը՝ Խրիմ, 1944ի Զատիկին՝ Սոքոլով (Լեհաստան) եւ գերման պարտութիւններու շրջանին, 1944ին՝ Հայտելպերկ կը գտնուէր:

Անհրաժեշտ է կարգ մը ճշդումներ կատարել Օհանջանեանի՝ Իսահակեանին ուղղած բաց նամակին, Զօր. Քէյսիի ուղղած

խորհրդապահական նամակին եւ Դրոյին յանձնուելու համար այս վերջինին ուղղած նամակին շուրջ:

Ա.- Օհանջանեան, ինչպէս շատեր պատերազմի ընթացքին եւ անկէ ետք, նոյնիսկ կուսակցական ղեկավարներ, սխալօրէն կարծած են թէ Դրոյի գլխաւորութեամբ «հայկական մեծ բանակ» կազմուած է⁴⁰: Իսկութեան մէջ, Դրո հրամանատարն էր փոքրաթիւ հետախուզական խումբի մը, կազմակերպուած 1943 Ապրիլին, սկիզբը 65 մարդով եւ որ Յուլիս 1943ին հասած էր իր առաւելագոյն թիւին՝ 120: Ըստ գերման աղբիւրներու, Դրոյի ղեկավարած խումբը կը կոչուէր *sonderkommando Dromedar 114 – Kampfgruppe 2.b.V. “Dromedar”*, որ կը հովանաւորուէր գերմանական *Abwehr*-ին⁴¹ կողմէ, արեւելեան ճակատին գաղտնի գործողութիւններու համար⁴²:

Հայ ռազմագերիներէ կազմուած բազմահազարանոց Հայկական Լեգէոնը կար, որ ինչպէս Խ. Միութեան բաղկացուցիչ միւս հանրապետութիւններու եւ մարզերու ռազմագերիներէն ըստ ազգութեանց կազմուած լեգէոններու շարքին էր, ենթակայ՝ գերմանական Վեիրմախի գերագոյն հրամանատարութեան եւ գերմանացի հրամանատարով⁴³: Հայկական Լեգէոնը Վեիրմախի կողմէ միւս ազգութիւններու լեգէոններուն հետ միատեղ հրամանագրուած էր 30 Դեկտեմբեր 1941ին, հրամանագիրը երկրորդուած էր 28 Մարտ 1942ին եւ ի վերջոյ լեգէոնը կազմուած էր 24 Յունիս 1942ին: Հայկական Լեգէոնը գնահատուած է 18,000էն 20,000 զինուորներով: Շրջան մը արեւելեան գրաւեալ շրջաններուն մէջ մնալէ ու գործելէ ետք, գերման անյաջողութիւններու շրջանին փոխադրուած էր արեւմտեան ճակատ, որպէս զսպիչ ուժ, գլխաւորաբար Հոլանտայի մէջ: Դրոյի՝ հայկական լեգէոնի հետ կապը հայ ռազմագերիներու ճամբարները գործուղուիլ իրենց կեանքի փրկութեան եւ այլ պատճառներով ռազմագերիները քաջալերել ընդառաջելու գերման Վեիրմախի ծրագրին⁴⁴:

Բ.- Գերմանիոյ եւ գրաւեալ երկիրներու կուսակցական մարմինները թերեւս Բիւրոյի հրահանգին չենթակուելով լուծարուած չէին եւ կը գործէին ըստ հնարաւորի, թերեւս գաղտնաբար կամ բացայայտօրէն, բայց զգուշանալով հրապարակային ելոյթներէ:

Գլխաւոր (բուն անունով Խոսրով Ներսէսեան), կը վկայէ. «Բ. Աշխարհամարտի ընթացքի միջոց մը Պերլին կը գտնուէի, ուր ՀՅԴ կոմիտէն պարբերական ժողովներ կը գումարէր...»⁴⁵:

Միսաք Թորլաքեան իր կարգին կը վկայէ թէ «երկրորդ աշխարհամարտի ընթացքին դաշնակցութեան Գերմանիոյ առաջին մարմինը հիմնուեցաւ Վիեննայի մէջ. ապոր մէջ կային բանաստեղծ Գէորգ Կառվարենց (կաթոլիկ), Զարմայր Զեննէճեան, Անդրէաս Սեւրուկեան (Նկարիչ Դերիշ), Շաւարշ Յարութիւնեան, Մկրտիչ Փափագեան, Արշակ Ենովքեան եւ Ալեք Միրիճանեան: Պատերազմի վախճանի օրերուն ստիպուեցան հեռանալ Վիեննայէն Ռուսիայի, Ռաւենսպորկ եւայլն»⁴⁶:

Յունաստանի մէջ կը գործէր ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէն, որ կը գործակցէր Արեղեանի նախագահած Պերլինի Ազգային Խորհուրդին հետ⁴⁷: Գրիգոր Մերճանոֆ, որ Համաշխարհային Բ. Պատերազմի սկիզբներուն Ֆրանսայի ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի անդամ էր, կը նշէ թէ հակառակ իր ընդդիմութեան, Ֆրանսայի ԿԿը ճաշկերոյթ մը սարքած է իպատիւ գերման սպաննորու, Փարիզի գրաւման շրջանին, որուն ինք մերժած է մասնակցիլ: Ան կը նշէ թէ «ԿԿի նիստերը կ'անցնէին փոթորկալի»⁴⁸:

Ըստ խորհրդային արխիւներու, ՀՅԴ միջշրջանային խորհրդակցական ժողով գումարուած է Պերլինի մէջ՝ Գերմանիայէն, Ֆրանսայէն, Յունաստանէն, Պուլկարիայէն եւ Ռումանիայէն եկած ներկայացուցիչներով, 1943ին⁴⁹:

Գ.- Գալով կուսակցական մամուլին, իրօք Փարիզի մէջ Շաւարշ Միսաքեանի հրատարակած *Յառաջ* Օրաթերթը դադրած էր պատերազմի գրեթէ մինչեւ աւարտը՝ 7 Ապրիլ 1945: Հայ մամուլի պատմութեան մասնագէտներէն բանասէր Արտաշէս Տէր Խաչատուրեան «ՀՅԴաշնակցութեան Հարիւրամեայ Մամուլը» գործին մէջ տպուած «ՀՅԴ Մամուլի Ցանկ»էն կը պարզուի թէ Առանցքի երկիրներուն մէջ կուսակցական կամ կուսակցութեան առնչուող հետեւեալ թերթերը լոյս կը տեսնէին Համաշխարհային Բ. Պատերազմի ընթացքին⁵⁰:-

Արագ, եռօրեայ (Պուքրէշ, Ռումանիա), 1932-1944, խմբագիր Յ.Ճ. Սիրունի:

Ազադ Խօսք Օրաթերթ (Սոֆիա, Պուլկարիա), 1932-1944, խմբագիր Օննիկ Մխիթարեան:

Նոր Օր Օրաթերթ (Աթէնք, Յունաստան), 1923-1944: Գերման գրաւման շրջանին *Նոր Օրի* խմբագիրներէն Անտոն Կազէլ «իր անձնական պատասխանատուութեամբ» մինչեւ 1944 Սեպտեմբեր վերահրատարակեց *Նոր Օրը* երկու էջով եւ փոքրադիր»,

Մետաքսասի կառավարության օրով օտարալեզու բոլոր թերթերուն հետ 1940ին դադարեց ետք:

Հայաստան Օրաթերթ (Պերլին, Գերմանիա), 1943-44, հրատարակութիւն՝ ՀԱԽի, խմբագիր Խոսրով Ներսէսեան:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Ալեքսանդր Խատիսեան (1876-1945) Հայաստանի Ա. Հանրապետութեան երկրորդ վարչապետն էր: Համաշխարհային Բ. Պատերազմին կ'ապրէր Փարիզ: Գերման իշխանութեանց հրաւերով ճամբորդած էր Պերլին, ուր տեսակցած Արտաքին Գործոց Նախարարութենէն Ֆոն Շուլենպուրկի հետ եւ մասնակցած՝ Ատլոն Պանդոկի հակախորհրդային ներկայացուցիչներու գերմաններու հրաւիրած խորհրդաժողովին (Levon Thomassian, *Summer of 1942, A Study of German Armenian Relations During the Second World War*, Atglen, PA, 2012, էջ 30):
- ² Դրօ, բուն անունով Դրաստամատ Կանայեան (1883-1956), 1933ին՝ ՀՅԴ 12րդ ընդհանուր ժողովին ընտրուած է Բիւրոյի անդամ եւ վերընտրուած 1938ի 13րդ ընդհանուր ժողովին: Ահաբեկած է հայերու եղեռնագործներ Նակաշիձէն եւ Ալիխանովը: Համաշխարհային Ա. Պատերազմին հայ կամաւորական Բ. Գունդի եւ 1918ի Մայիսին Բաշ Ապարանի ճակատի հրամանատար էր, ապա՝ Ա. Հանրապետութեան ռազմական նախարար: Բ. Համաշխարհային Պատերազմի սկիզբին կ'ապրէր Պուրէշ: 1941ի Յունիսին փոխադրուած է Պերլին:
- ³ Արտաշէս Աբեղեան (1887-1955): Պերլինի մէջ եղած է 1922-1945 Պերլինի Համալսարանի Արեւելեան Լեզուներու Բաժնի Հայագիտական Ամբիոնի վարիչ:
- ⁴ Աւետիք Իսահակեան, «Արկածախնդիրները», *Ժողովուրդի Ձայն Օրաթերթ*, Պէյրութ, Ե. Տարի, թիւ 342, 27 Յունուար 1943 եւ թիւ 325, 28 Յունուար 1943: ՀՅԴն պատերազմի ամառտէն ետք կը յայտնէր որ մինչեւ 2 Փետրուար 1943 Ստալինկրատի մէջ նացի Գերմանիոյ ջախջախիչ պարտութիւնը, «մանաւանդ Դեկտեմբեր [1942]-Յունուարին [1943], բնաւ յայտնի չէր մարտերէն ահեղագոյնի բախտակշիռ ելքը. կոհիւր կրնար վերջանալ նաեւ գերման յաղթանակով: Այս յոռի ենթադրութեամբ ահա, 1942ի Դեկտեմբերին Չեկան կը թխէ «Արկածախնդիրներ» խորագրով իր յօդուածը, զայն ստորագրել կու տայ Իսահակեանին եւ շտապ կը յղէ արտասահմանեան բոլոր թերթերուն (որոնց կարգին նաեւ՝ *Յուսաբերին*): Յօդուածը Դաշնակցութեան դէմ ուղղուած չէ՛, այլ սոսկ անոր ծոցին մէջ տեղ գտած «արկածախնդիր»ներուն: Այս մասին ակնարկութիւն կայ Մանուկ Քրզըլեանի *Մորկածին Դրօն*, Լոս Անճելըս, 2004, էջ 127: Ալիկ Իսահակեան, Աւետիք Իսահակեանի թողը, Երեւանի մէջ տողերս գրողին հաստատեց թէ գրութիւնը Չեկային կողմէ թելադրուած էր:
- ⁵ Համօ (Համազասպ) Օհանջանեան (1879-1947), բժիշկ, Հայաստանի Ա. Հանրապետութեան բիւրօ-կառավարութեան վարչապետ: Համաշխարհային Բ. Պատերազմին կ'ապրէր Գահիրէ: Անդամ էր ՀՅԴ Բիւրոյին:
- ⁶ Համօ Օհանջանեան, «Բաց Նամակ Բանաստեղծ Ա. Իսահակեանին», *Յուսաբեր Օրաթերթ*, Գահիրէ, 29րդ տարի, թիւ 21, 24 Ապրիլ 1943:

- ⁷ Պերլինի Հայ Ազգային Խորհուրդը (Armenischen Nationalen Gremiums) կազմում էր 1942 Դեկտեմբերին: Ան ոչ մէկ կապ ունէր հայկական լեզունին հետ որ կը գործէր գերման քանակի հրամանատարութեան ներքեւ: Կային կապի պաշտօնեայ հայեր՝ երկու մարմիններուն միջեւ:
- ⁸ Այս յայտարարութեան գերմաներէն օրինակը գտնուած է նացիներու հետ գործակցող անձի մը քնակարանէն (որ գրաւուած էր Փարիզի մէջ 1944ի Օգոստոսին նացի Գերմանիոյ դէմ ապստամբութեան ժամանակ), Շահէ Տատուրեանի կողմէ: Այս յայտարարութեան մասին գրուած է Փարիզի *ժողովուրդ* թերթին մէջ, նաեւ լոյս տեսած է առանձին գրքոյկի մէջ (Շահէ Տատուրեան, *Հայ ժողովուրդի Ներքին Թշնամիներուն Դէմ*, Փարիզ, 1945, էջ 28-31): Վաւերաթուղթը անգլերէն տպուած է՝ United States of America, Congressional Records, Proceedings and Debates of the 79th Congress, first session Document reveals Dashnag Collaboration with Nazis, Extension of Remarks of Hon. Emanuel Celler of New York in the House of Representatives, Thursday, November 1, 1945, 677239-14240:
- ⁹ Պերլինի Հայ Ազգային Խորհուրդի միւս անդամներն էին Գարեգին Նժդեհ, Դափթ Դափթխանեան, Տիրայր Ֆրունճեան եւ Յարութիւն Պաղտասարեան (Thomassian, էջ 32):
- ¹⁰ Արտաշէս Աբեղեան, «Հայ Ազգային Խորհուրդը եւ Իր Օրգանը», *Ազապ Հայաստան*, Պերլին, Օգոստոս 1943, թիւ 1:
- ¹¹ F.O. 371/34964:
- ¹² Անդրանիկ Ծառուկեան, *Մեծերը եւ Միսները...*, Պէյրութ, Տպ. Ալթապիրէս, 1992, էջ 233-240: Նախ հրատարակուած «Մարդ Պատկերը եւ Պատկեր Մարդը» խորագրեալ շարունակական գրութեան մէջ, *Նոր Կեանք*, Լոս Անճելըս, Է. տարի, թիւ 35, 22 Օգոստոս 1985, էջ 2:
- ¹³ Նոյն:
1941-42ին, ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամ պետական նախկին երեսփոխան Խոսրով Թիւթունճեան՝ իր *Մեր Խօսքը Բեզլար Նաւասարդեանի Ելոյթին Առթիւ* (Պէյրութ, 1966) գրքոյկին մէջ, էջ 93, կը հաստատէ Ծառուկեանի գրածը թէ 1942ի աշնան Էլ Ալամէյնի ճակատամարտի նախօրեակին Օհանջանեան Պէյրութի ԿԿին նշած է. «*Մենք Դաշնակիցների հետք ենք, իբրեւ ժողովրդապետական կուսակցություն եւ դէմ ենք հիթլերեան ամէն գործակցութեան*», բայց չէ յաջողած «*իր իսկ կողմնակիցներուն խօսք հասկցնել*»: Էլ Ալամէյնի ճակատամարտը 23 Հոկտեմբեր-4 Նոյեմբեր 1942ին էր:
- ¹⁴ Սիմոն Վրացեան, *Կեանքի Ուղիներով*, Դ. Հար., Պէյրութ, Տպ. Համազգային, 1965, էջ 218. նաեւ՝ Սիմոն Վրացեան, *Մրրկածին Դրօն*, Պէյրութ, Տպ. Համազգային, 1996, էջ 168:
- ¹⁵ Ժիրայր Միսաքեան որ Լոնտոն կ'ապրէր, Շաւարշ Միսաքեանի եղբայրն էր, գորգի վաճառական: Հայաստանի Ա. Հանրապետութեան Մեծն Բրիտանիոյ մէջ դեսպան Զօր. Յ. Բագրատունիի քարտուղարն էր: Միսաքեան կը համարուէր «Հայկական Պատուիրակութեան» եւ ՀՅԴի ներկայացուցիչ:
Ըստ բրիտանական արխիւներու նիւթերու, Ստալինկրատի մէջ խորհրդային վճռորոշ յաղթանակէն անմիջապէս ետք Միսաքեան բրիտանական իշխանութիւններուն դիմած էր Պի.Պի.Սի.ի հաղորդումներուն մէջ հայերէնով

լուրեր տալու խնդրանքով, բայց՝ մերժումով: Դիմումը հաւանաբար կատարուած է այն մտքով որ նացի տիրապետութեան տակ եղող հայեր, մանաւանդ անոնց հետ գործակցողներ, լրիւ տեղեակ ըլլային դաշնակիցներու ռազմական յաջողութիւններուն եւ արձանագրուած շրջադարձին ու զգուշանային նացիներու հետ իրենց կապերը խորացնել:

¹⁶ Ռիչըրտ Քէյսի (Richard Casey, 1890-1976) աստրալիացի քաղաքական գործիչ մըն էր, որ Միջին Արեւելքի մէջ բրիտանական կառավարութեան խորհրդականն էր: Համաշխարհային Բ. Պատերազմի ընթացքին, մինչեւ 1944. բրիտանական կառավարութեան վարչապետ Ուինսթըն Չըչիլ զինք նշանակած էր Միջին Արեւելքի մէջ բրիտանական պետական նախարար, Գահիրէն ունենալով իբրեւ կեդրոն: Ան կ'ատենապետէր Միջին Արեւելքի Պաշտպանութեան Յանձնախումբին, որ կը զբաղէր քաղաքական, տնտեսական եւ քարոզական հարցերով: 1944ին Գահիրէն ձգելով Պենկալի կառավարիչ նշանակուեցաւ:

¹⁷ F.O., E 3285/703/65:

¹⁸ Նոյն: Սարորդի, «Յունաստանը Մեծ Պատերազմի Շրջանին» գրութեան մէջ (*Հայրենիք Ամսագիր*, Փետրուար 1958, 36րդ տարի, թիւ 2, էջ 71) կը նշէ թէ Բ. Աշխարհամարտի վաղորդայնին յատուկ շրջաբերական նամակ ստացած էին ՀՅԴ Բիւրոյէն ուր կազմակերպութիւնը իր դիրքը ճշդած էր Դաշնակիցներու կողքին:

¹⁹ F.O., 371/34964:

²⁰ Զօր. Քէլթըն անձանօթ մը չէր ՀՅԴ Բիւրոյին: Տոքթ. Երուանդ Խաթանասեան կը յայտնէ թէ 1943ին Վահան Նաւասարդեան «*ինձ 17 անգլիական ոսկի փողով նամակով, որպէսզի Զօր. Քէլթընի միջոցաւ հասցնէի Ռուբէնին [Տէր Մինասեանի]*» (*Նայիրի Շաքաթաթերթ*, Պէյրութ, 25րդ տարի, թիւն 13-14, 15 Օգոստոս 1980): 1942-44՝ Ռուբէն իր հրեայ տիկնոջ հետ կ'ապրէր Երուսաղէմ:

²¹ Պերլինի ռատիօկայանի խօսնակն էր Վիգէն Շանթը, Լեւոն Շանթի որդին, որ 1944 Մարտին գերմանական համազգեստով զոհ գնաց Պերլինի վրայ Դաշնակից օդուծի կատարած ռմբակոծումներուն:

²² Բրիտանացիք տեղեակ էին Վեհրմախթի 30 Դեկտեմբեր 1941ի հրամանագիրին, որ իմիջի այլոց կը նշէր Հայկական Լեգէոնը, թէւ այդ այլազան պատճառներով 1942ի ամռան կազմուեցաւ: Արդէն 1942 Հոկտեմբերին բրիտանացիք տեղեակ էին Դրոյի գործունէութիւններէն (F.O., 371/34964):

²³ Պէտք է ըլլայ վարչապետ:

²⁴ Ֆելտմարշալ Կէօրինկի այս գաղտնի հրահանգը խորհրդային աղբիւրներու մէջ ալ հրատարակուած է (Քնարիկ Գրիգորեան, *Հայ Ժողովրդի Մասնակցութիւնը Կովկասի Պաշտպանութեանը (1942 թ. Յուլիս-1943 թ. Հոկտեմբեր)*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1971, էջ 20):

²⁵ Կ'ակնարկէ 15 Յուլիս 1943 թուակիր Դրոյի ուղղուած նամակին:

²⁶ F.O., 371/34964:

²⁷ Հայկական Լեգէոնին մասին տե՛ս՝ Զաւէն Մսըրլեան, «Համաշխարհային Բ. Պատերազմի Հայկական Լեգէոնը», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հոր. Ժ.*, 1982-1984, էջ 163-191:

- ²⁸ Անձնապես չկրցանք հաստատել Ռուբեն Տէր Մինասեանի (1882-1951) դոկտորայի տիտղոս ունենալը: Կենսագրականը կը նշէ որ ան ժընեի Համալսարանէն շրջանաւարտ էր:
- ²⁹ Նկատի ունի դաշնակցական ղեկավար Վարոս Բաբայեանի առեւանգումը:
- ³⁰ Երուանդ Խաթանասեան կը գրէ թէ «1943ին Ռուբէնը ղրկուել էր Սուրիա-Լիբանան այնպէս, որ ան իր քրտեան հետ կապ ստեղծելու առաքելութեամբ» (Նայիրի Շաբաթաթերթ, 25րդ տարի, թիւ 13-14, 15 Օգոստոս 1980, էջ 2): Այս առաքելութիւնը Ռուբէնի 1942-44 տարիներուն Պաղեստին ապրած շրջանին էր: Հոյիպուն քրտական ազգային քաղաքական կուսակցութիւն էր, հիմնադրուած 1927ին, Քիւրտ Ազգային Ընդհանուր Համագումարին: ՀՀԴն համաձայնութիւն կ'ընէր Հոյիպունի հետ:
- ³¹ Գնդ. Սիմսըն կը սխալի երբ Կէօրինկի գաղտնի հրամանը գերմանացիներուն կողմէ «ենթադրեալ խօսք» կը համարէ: Ինչպէս ծանօթ 24ին մէջ նշած ենք, խորհրդային հետախուզութիւնը պատերազմի ընթացքին զայն ձեռք ձգած էր, եւ խորհրդային աղբիւրները զայն օգտագործած են որպէս գերմանական վաւերական գաղտնի հրահանգ:
- ³² F.O., 371/34964:
- ³³ Նոյն:
- ³⁴ F.O., 371/34964/4679:
- ³⁵ Օհանջանեանի՝ Քէյսիին գրած եւ Դրոյին ուղղած նամակներուն եւ անոնց տրուած Գահիրէի մէջ Գնդ. Սիմսընի եւ Լոնտոնի Ֆորէյն Օֆիսի բրիտանական մեկնաբանութեանց թղթածրարը Լոնտոնի Ֆորէյն Օֆիսի արխիւատան մէջ յայտնաբերեցի 1972ի ամառը, երբ հոն պրպտումներ կ'ընէի: Ապա դիմումով եւ արտօնութեամբ ստացայ բնագիրներուն լուսապատճենները: Սակայն անոնք չհրատարակեցի որպէսզի Պաղ Պատերազմի շրջանի ներհայկական կուսակցական պայքարներուն մէջ չօգտագործուին: Այժմ կու տամ լոկ պատմութեան համար:
- ³⁶ F.O., 371/34964/4679:
- ³⁷ Նոյն:
- ³⁸ Շալիդ Գրիգորեան, «Իրական Պատմութիւն Դրոյի Կեանքից», Գրական Թերթ, Երեւան, 11 Յունուար 1991:
- ³⁹ «Պատմութիւնը՝ Ապակիների Տակ եւ Արկղերում. ՀՀԴ Պատմութեան Թանգարանը 100 Տարեկան է», Ազդակ, ՀՀԴ 125Ամեակի Բացառիկ, Պէյրութ, 2015, էջ 140:
- ⁴⁰ ՀՀԴ ղեկավարներէն պատմագէտ եւ տեսաբան Հրաչ Տասնապետեան Դրոյի կիսանդրիի բացումին առիթով ըսաւ. «Յանուն ռուսական բանակէն եւ արեւելեան ճակատէն ճողոպրած կամ գերի բռնուած բազմահազար հայ ռազմագերիներու եւ առհասարակ՝ եւրոպաբնակ հայերու անվտանգութեան, Դրոն անոնցմէ կազմեց յատուկ զօրամաս մը եւ գերման բանակներուն հետ արշաւեց դէպի Խրիմ ու Հիւսիսային Կովկաս» (Ազդակ Օրաթերթ, 8 Մայիս 1999): Նոյն սխալը ըրած են ուրիշներ: Դաշնակցական պատմագիր Ռուբինա Փիրումեան իր Հայկական Հարցի Պատմութիւն (Երեւան, Հրտ. 2000, էջ 193) գիրքին մէջ կը գրէ. «1941 թ. Դեկտեմբերին Դրոյի հրամանատարութեամբ կազմուեց հայկական 812րդ զօրամասը, որ մինչեւ 20,000ի հասաւ եւ

մեծմասամբ կազմուած էր Կարմիր Բանակից գերի ինկած հայ զինուորներից: Հայկական զորամասը ռազմական գործողութիւնների մէջ մտաւ Դրիմի ու Հիւսիսային Կովկասի ճակատներում»: Նոյն սխալին մէջ է նաեւ ռամկավար ազատական խմբագիր Գերսամ Ահարոնեան, որ *Մեծ Երազի Ճամբուն Վրայ* (Պէյրուֆ, Տպ. Ատլաս, 1964, էջ 174) գիրքին մէջ գրած է. «Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին, Հիթլերական Գերմանիոյ բանակներուն հետ [Դաշնակցութիւնը] զօրք դրկեց, Դրօի հրամանատարութեամբ, մինչեւ Հիւսիսային Կովկաս, յուսալով որ նացիները իրեն կը շնորհէին գրաւուելիք Հայաստանին իշխանութիւնը»: Դրօն իր հետախուզական խումբէն անդամներ է որ առաքած էր Խրիմ եւ Հիւսիսային Կովկաս: Ոչ մէկ ատեն Հայկական Լեգէոնը չէ ղեկավարած եւ բանակ չէ ունեցած:

⁴¹ Abwehրը գերմանական ինթելիճընսն էր (գաղտնի հետազօտական սպասարկութիւն), Զօր. Քանարիսի հրամանատարութեան ներքեւ:

⁴² Thomassian, էջ 49:

⁴³ Անդրանիկ Զելեպեան, *Դրօ*, Միշիկըն, 2003, էջ 281:

⁴⁴ Համլէթ Գէորգեան, *Դրօ*, Երեւան, ք. տիպ, 2000, էջ 517-518: Ան կը գրէ թէ 1942ի աշնան Դրօ հայ ռազմագերիներու հետ հանդիպած է եւ իրենց խօսած «գերմանացիների հետ համագործակցելու հիմնական շարժառիթներն ու նպատակները»:

⁴⁵ Գիսաւոր, «Տոմսեր», *Ազդակ Օրաթերթ*, 59րդ տարի, թիւ 260, (16336), 21 Յունուար 1986, էջ 5. նաեւ՝ Խոսրով Ներսէսեան, *Տոմսեր*, Պոսթըն, "Կարպօ", 1984:

⁴⁶ Միսաք Թորլաքեան, *Օրերուս Հետ*, Պէյրուֆ, Տպ. Հայկ, 1963, էջ 573-574:

⁴⁷ Սարորդի, «Յունաստանը Պատերազմի Շրջանին», *Հայրենիք Ամսագիր*, Փետրուար 1958, 36րդ տարի, թիւ 2, էջ 70-71:

⁴⁸ Գրիգոր Մերճանոֆ, *Իմ Կտակը*, Պէյրուֆ, Տպ. Տօնիկեան, 1972, էջ 91-92: Մերճանոֆ ծնած է Պոլիս 1880ին, ռուսահպատակ ծնողներէ: Ուսումը ստացած է պուլկարական դպրոցներէ: ՀՅԴի անդամակցած է 1890ին, 1905ին մասնակցած է հայ-թաթարական կռիւներուն: 1909ին մասնակցած է ՀՅԴ 9րդ ընդհանուր պատգամաւորական ժողովին: Հռոմի մէջ Սայիտ Հալիմ Փաշայի ահաբեկումին մասնակցած է: Կուսակցութեան շարքերէն քաշուած է ինքնամեկուսացումով:

⁴⁹ Ռ. Մարտիրոսեան, *Դաշնակցութեան Հակաժողովրդավարական Գործունէութիւնը Երկրորդ Համաշխարհային Պատերազմի Տարիներին*, Երեւան, 1986, էջ 55:

Սարորդի, էջ 72, կը գրէ թէ ՀՅԴ Կեդր. Կոմիտէն որոշեց նաեւ «Պերլինի ազգային համագումարին ղրկել երկու լիազօր ներկայացուցիչներ»: Մեզի յստակ չեղաւ թէ նշուած 'ազգային համագումար'ը ՀՅԴ Պերլին գումարած միջշրջանային ժողովն էր, թէ՞ Պերլինի ՀԱԽին կողմէ կազմակերպուած այլ ժողով մը:

⁵⁰ Արտաշէս Տէր Խաչատուրեան, «ՀՅԴ Մամուլի Ցուցակ 1890-1990)»՝ *Հայ Մամուլի Մարտնչական Գործեր*, խմբ.՝ Կ. Յովհաննէսեան, Պէյրուֆ, Տպ. Համազգայինի Վահէ Սէթեան, 2014, էջ 414, 422, 457 եւ 442:

HAMO OHANJANIAN'S LETTERS TO GEN. CASEY AND TRO GANAYAN
(Summary)

ZAVEN MESSERLIAN

During WWII, when the fate of the battle of Stalingrad was still undecided, the Soviet Armenian poet Avedik Issahakian submitted an article entitled "The Adventurers..." to the Armenian Diaspora media, accusing ARF party leaders Alexander Khadissian, Tro Ganayan and Ardashes Apeghian of collaborating with the Nazis. Months later, after the Nazis had surrendered in Stalingrad, Hamo Ohanianian, a former prime minister of the first Republic of Armenia (1918-1920) and a leading member of the Tashnag Party Bureau, replied to Issahakian in an open letter, arguing that he had offered no proof and that the said leaders had neither uttered a word in favor of Hitler, nor signed any document, nor made any declarations.

Facts on the ground were different, however. The Armenian National Council, led by Apeghian, had signed a document on February 15, 1943 calling for the liberation of Armenia from Soviet rule and for the political autonomy of Armenia under the protection of the Third Reich. In their publication, *Azad Hayastan* (Free Armenia), Apeghian had written a leading article on this subject.

News spread about the formation of national legions, including an Armenian legion. There were conflicting reports on the involvement of Tro, who had a team of 65 to 120 collaborators. Thus, Ohanianian, wrote a letter to the British Minister of State, Richard Casey, dated July 15, 1943. Ohanianian reminded Casey that the Party supported the Allied cause and reiterated that position, announcing that in the Nazi occupied European countries, where 150,000 Armenians resided, the Tashnag newspapers, chapters, and lecture halls had all ceased functioning, that there had been no formation of an Armenian Legion, and that the Armenian broadcast from Berlin Radio only gave news and no political speeches. It mentioned Goring's decree where he had said Armenians were inimical to Germans. Furthermore, in the letter Ohanianian requested that an accompanying letter addressed to Tro be dispatched to a party member either in Paris or Bucharest. The said letter was in Armenian and forbade Tro from undertaking any collaboration.

A commentary on both letters by British Col. Simson's indicated that, despite London's denial of the receipt of a letter dated July 6, 1941 which assured Tashnag party support to the Allies, that letter indeed had been sent and the Tashnag party had remained faithful towards the Allies. However, London had decided to cut all ties with the Tashnag party so as not to arouse the suspicions of Turkey and the USSR. Simson noted that the main reason for Ohanianian's letter was the undisciplined actions of some individuals in the occupied European territories. There were unconfirmed reports in October 1942 that Ganayan and Khadissian were collaborating with the Germans.

As the political section of British intelligence had given its orders, the Minister of State did not reply to the letter, but did send it to London.

These documents are being published for the first time, with comments on some of the matters raised by both letters.